

ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար սարե-  
կան 10 ֆրանկ. վեցսու-  
սեայ 5 ֆրանկ. Արսասահ-  
մանի համար սարեկան 12  
ֆրանկ, վեցսուսեայ 6 ֆր.

ԿԱՆՆԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ

Գրութիւնք ևս չեն տրուիր:

Իրանուցեալ տողը 20 սան-  
քիւն է:

Գին 10 ՍԱՆԹԻՄ

# ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ  
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹ ԶՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱՔԱԹ ՕՐԵՐԸ

ОТГОВОРНИКЪ: Д-ръ Т. Хр. Стояновъ.  
А Д В О Ж А Т Ъ

Նախակ ևս դրամ դրկեչ  
Խրատարութեան հասցիքն.

Редакция на вѣстникъ  
«Шаржумъ»  
Варна.

Redaction du journal  
«Charjourn»  
Varna (Bulgarie).

Գին 10 ՍԱՆԹԻՄ

Memorandum  
No. 4

## ԱԶԳՈՒԹԵԱՆ ՏԱՐԻԵՐ

—)(—

Քսան տարիէ որ Պոլսի մէջ,  
նոր սերունդին առջեւ կը պոռան  
մեր թերթերը. «Ռուսմանիոյ հա-  
յերը կորան, Ռուսմանիոյ հայերը  
կը կորսուին»: Ասոր իբր դար-  
ման՝ Պատրիարքարանի կողմէն  
պարբերաբար զրկուեցան վար-  
դապետներ կամ արեղաներ «այ-  
ցելու հովիւի» պաշտօնով ճիշդ  
վեհունի վարդապետին պէս:

Ատոնք եկան ու գացին, կամ  
թէ գացին ու կուգան, և սակայն  
ի՛նչ ծրագիր մշակեցին, ի՛նչ  
ըրին իբրեւ դարման, կամ թէ՛  
ի՛նչ կրնային ընել մտքով դար-  
տակ ու սրտով թափուր այդ հո-  
գեւորական էակները: Հարկ չկայ  
ըսելու թէ ո՛չ ինչ ըրին. ուստի  
և այսօր ալ կարելի է պոռալ ա-  
ւելի մեծ ուժով, թէ Ռուսմանիոյ  
հայերը կորան, Ռուսմանիոյ հա-  
յերը կը կորսուին՝ կորսուելու  
համար առձեռն պատրաստ ունե-  
նալով այն դիւրին միջոցները՝  
որոնք Ռուսմանիոյ մէջ, իրաւ-  
ունքի ու քաղաքական ազատու-  
թեամբ օժտուած այդ գեղեցիկ  
երկրին մէջ, Դանուբի պէս լա՛յն  
ու յորդ են:

Ու ինձի տակաւին այսօր ալ  
զարմանալի կը թուի ի՛նչու,  
կամ ի՛նչպէս կորսուած չեն նոյն  
խիւ անունով ալ: Կերեւի թէ  
ուղղակի մայր երկրէն գաղթող  
հայրերուն՝ ցեղային այնպիսի  
առաւելութիւններով պէտք է օժ-  
տուած ըլլար, որոնք կըրցած են  
դարերու հոսանքին մէջ աննդծ  
մնալ, և, բնականաբար, քիչ  
քիչ մեղմանալ իրենց սկզբնա-  
կան ուժին համեմատութեամբ:

Հիմա, խօսքս մասնաւորելով  
Պուրբէշի հայոց վրայ, կը խոս-  
տովանիմ որ ռուսմանական գո-  
հարին մէջ՝ տակաւին այսօր ալ  
ունենալ հարիւր եօթանասուն  
տուն «հայ», փոյթ չէ՛ անունով  
միայն «հայ», շատ բան կարժէ՛  
հինգ վեց հարիւր տարուան գաղ-  
թականութիւններէ ետքը: Ու  
այնտեղ պիտի տեսնէք կիրակի  
օրերը՝ սեւ տչքերով ու սուր  
թարթիչներով հայուհին, որ ա-

րեւելեան տիպարը կը պահէ իր  
նրբացած դիմագիծերովն ու հա-  
սակին առած նրբուղէչ վէտվէ-  
տումներովը: Ո՛չ մէկ շնորհքէ  
զուրկ է ան. իր Ռուսման հայրե-  
նակիցներուն հետ՝ դասարանէ  
դասարան կանցնի, շրջաններ կը  
ըլորէ, և բարձրագոյն սրահ-  
ներու մէջ իր ցեղային յղկուած  
շնորհքներովը կը փայլի: Ու իր  
ցեղն է որ բնաւ իրմէ օգուտ մը  
չունի այսօր:

Այսպէս է միւս սեռն ալ, գուցէ  
և շատ աւելի. իր առջիւ հարթ  
են ընկերական ամէն ատիճան-  
ներ. աշխատութեամբ ձեռք բե-  
րուելիք ամէն աստիճաններու  
վրայ ալ կանգուն է ան. համա-  
ւաւոր բժիշկներ, անուանի իրա-  
ւաբաններ, բարձրատիճան պաշ-  
տօնատարներ զինուորական աս-  
տիճանաւորներ՝ մշակուած հայու  
գեղեցիկ գէմքով, լուրջ ու ա-  
զուոր աչքերով: Պակաս չեն կալ-  
ուածատէրներ, վարկի ու պա-  
տիւի տէր վաճառականներ ու  
սեպանաւորներ: Ու բնաւ տա-  
րակոյ՝ չկայ ըսելու թէ ատոնք  
ամենքն ալ շատ բան կը պար-  
տին իրենց ցեղական ծագումին,  
այն արիւնին՝ որ իրենց երակ-  
ներուն մէջ կը պահէ յաջողելու,  
անվհատ աշխատելու, տոկալու և  
բարձրանալու ընդունակութիւն-  
ները: Անշուշտ, իբրեւ մարդ,  
շատ բան կը պարտին իրենց ցե-  
ղին... և իրենց ցեղն է որ,  
իբրեւ մարդ, ո՛չ մէկ օգուտ  
կրնար տեսած ըլլալ՝ անհատա-  
կան կեանքի այն գերակշիռ հան-  
գամանքներուն մէջ՝ որ կապ-  
րին Ռուսման գոհարի հայ գաղ-  
թականները, — անդորր կեանք,  
խաղաղ ու առանձնաշնորհուած  
քաղաքացիութիւն, խղճի ու մրտ-  
քի անկաշկանդ ազատութիւն,  
ոչ մէկ սեղմում մարդկային ի-  
րաւունքի տեսակէտով և ո՛չ մէկ  
խոչընդոտ առջիւ՛ք՝ քրտինքի ու  
արժանիքի ճամբուն վրայ:

Ու սակայն կը պակսի բան մը,  
թերեւս ամենէն մեծ բանը՝ ցե-  
ղերու կամ ազգերու գոյութեան  
տեսակէտով: Մեր անդիտակից  
դարերու մէջ՝ կրօնքը հոչակ-  
ուեցաւ մեր անդիտակից էու-

թեանը իբրեւ կենսական պայ-  
մանը. եկեղեցին ու հոգեւորա-  
կանը անոր թանձրացեալ խոր-  
հրդապատկերներն եզան, եր-  
կուքն ալ փոխադարձ իրարու  
կապուած իրենց ունեցած շահե-  
րովը: Եւ սակայն այսօր, նախա-  
պաշարումներու շէնքը խախտելէ  
յետոյ, երբ դողող շառաւիղներ  
գաղտագողի մտքերէ ներս ին-  
կան, եկեղեցին ու հոգեւորա-  
կանը՝ երկուքն ալ իրենց մեր-  
կութեանը մէջ տեսնուեցան, —  
հոգեւորականը՝ տոպրակ մը վզէն  
անցուցած՝ մուրացկան, եկեղե-  
ցին՝ զինքը վարող ձեռքերուն  
տակ մութ շէնք մը՝ իր շահե-  
րովն ու առկայ զանութիւններովը:  
Ձէ՛, մեր փրկութիւնը, մեր ցե-  
ղին էացնող տարրը՝ այդ մը-  
թին շէնքն ու տոպրակը վզին  
անցուցած յաւիտենական մու-  
րացկանը չեն: Ռուսմանիոյ մէջ  
ամէն տեղ եկեղեցի ու թոշակա-  
ւոր եկեղեցական, ու մենք այ-  
սօր կը պոռանք. «Ռուսմանիոյ  
հայերը կորան», Ռուսմանիոյ հա-  
յերը կը կորսուին»...

Անխօս քարեր, գետակ մը,  
չէնքերու փշրանքներ, գերեզ-  
մաններու կոտորուած նշխարներ,  
թղթի կոտորուանք. և կամ ա-  
նոնց յիշատակը, թերեւս, ազ-  
գերու գոյութեան մէջ աւելի մեծ  
կշիռ ունին, և շատ հաւանա-  
կանօրէն: Ատոնք սուր կէտեր են  
թղթի կամ հողի վրայ, որոնք  
դարերու մէջ աչքի ու մտքի առ-  
ջեւ կը մնան ու բաներ կը խօսին  
ազգայնութեան տեսակէտով, և  
մե՛ծ սիրտը, ուր միլիոններու  
ջիղերուն մէջ կենդանական հոյ-  
զը կը կեդրոնանայ ու կը նորո-  
գուի յաւիտենականապէս, ա-  
մենքին ալ կաղզէ միեւնոյն ու-  
ժով, միեւնոյն ցաւերով ու մի-  
եւնոյն կսկիծներով: Ռընանին  
ըսածին պէս. «Գիւցազնական  
անցեալ մը, մեծ մարդոց ու  
փառքի, — ճշմարիտ փառքի ըսել  
կուղեմ, — անցեալ մը, ահաւա-  
սիկ ընկերական դրամագլուխը՝  
որու կը պատշաճի ազգային  
գաղափար մը: Անցեալին մէջ  
ունեցած ըլլալ հասարակային  
փառքեր, ներկային մէջ՝ հա-

սարակային կամք մը, մեծա-  
մեծ բաներ միասին ըրած ըլ-  
լալ, նորէն ալ ընելու կամեցո-  
ղութիւն ունենալ, ահաւասիկ  
ժողովուրդ մը ըլլալու էական  
պայմանը: Մարդ համեմատա-  
բար կը սիրէ իր ըրած զոհողու-  
թիւնները, իր կրած տառա-  
պանքները: Կը սիրես այն տունը  
զոր դու ինքդ շինած ես և որ  
յաջորդներուդ կը կտակես»: Ու  
այս ամէնուն մէջ՝ ամենէն աւելի  
խօսուն են հասարակային վիշ-  
տերը՝ որոնք ցեղերու անունով  
ցեղերը կը զարնեն անգթօրէն:

Ի՞նչ ունին Ռուսմանիոյ հայերը,  
մաքուր երկինք մը՝ ուր իրենց  
համար ո՛չ մէկ սեւ կէտ կայ, և  
ազգայնութեան տեսակէտով ալ  
ահագին դատարկութիւն մը՝ ուր  
կորուստէ զատ բան մը երեւա-  
կայել կարելի չէ. և ինչ որ  
անցեալէն կրնային ունեցած ըլ-  
լալ, սերունդէ սերունդ մաշուե-  
լով, տաշուելով հալեցաւ կէտի  
մը պէս:

ՇՆԱՍԱՊ

## ԵՂԲԱՅՐԱՍՊԱՆ ԿՈՒԻ ՍԸ

—X—

Սրտի ճշմարիտ տխրութիւնով կը  
կարգանք Մարտի եւ երբեմն նոր  
կեանքի մէջ այն տողերը որոնք մէջ  
մէկ թունաւոր նետերու պէս կը յար-  
ձակին յեղ. տարբեր կուսակցութեան  
մը, Դաշնակցութեան վրայ:

Մենք որ միշտ համբաշխութեան  
իրականանալը հրազած ենք և մեր  
բոլոր ուժերով կոխ մղած անոնց  
գէմ որոնք յեղափոխութիւնը ան-  
պատուելի իրենց կեանքին նպատա-  
կակէտ ընտրած են, բնական է որ  
գայրաբանք երբ կը տեսնենք թէ  
նոյն իսկ մեր պաշտպանած յեղափո-  
խութեան մէկ մասնիկին պաշտօնա-  
կան օրկանը, Մարտ՝ պայքար կը  
բանայ քոյր կուսակցութեան մը  
գէմ, և այս՝ այնպիսի խօլ, ոխե-  
րիմ, գազանային թափով, որ կար-  
ծես թէ ճակատամարտը թրքական  
բանակին գէմ եղած ըլլար:

Տխուր, շատ տխուր բան է ա-  
սիկա:

Պ. Արփիար, Հնչակեան անդ կու-  
սակցութիւնը տապալելէ ետքը, կամ  
լու եւս, երկու մասերու վերածնելէ  
ետքը, այսօր ալ իր աւելիք տապա-  
րով զինուած Դաշնակցութեան վրայ  
կը խոյանայ: Ան ալ կործանել կու-  
զէ կոր եւ հաւուած, սխտէմթիք

ամբաձգութիւնը արդէն սկսած է : Այս եղբայրասպան կոռւին առջեւ , մարդ որքան ալ տրամադրութիւններով լեցուած ըլլայ , կը փորձուի հարցնել ինքզինքին թէ արդեօք ազգին պտակտիչ չար ոգին չէ՞ Պ. Արփիար :

Մեր եւ ամէն հայերու արդարացի իղձն է որ մեր մէջ ապարդիւն վէճերը վերանան , առերութիւնները մոռցուին եւ ամէն ոք հաւաքաբար կամ անհատապէս գետինը հարթելու աշխատի , որպէս զի միութեան ժամը օր օրի փոխանակ մօտենալու՝ անհունին մէջ շքնկրկի :

Եւ ահա Պ. Արփիար ամբողջ ազգին նուիրակն մէկ իղձին դէմ կը դռնակները եւ կը բանայ այնպիսի կոխ մը ուսկից ամէնքս ալ կը նստկանք :

Շատ բան կը կորսնցնէ Պ. Արփիար այս ընթացքով . որովհետեւ հասարակութիւնը մահու չափ կատէ առնալ որ եղբայր եղբոր դէմ հանելու մասնագիտութիւններ կիրառութեան դնելէ չեն դադարիր :

Ներքին վէճերը յարածուն վիճակի մէջ պահելու միտողները , գրիչը ձեռքերնին առած ատեննին , պէտք չէ մոռնան թէ դժբախտաբար այդ վէճերը խմբագրութեանց մէջ չեն վերջանար , հապա կը ծառային հրդեհի մը բոցերուն պէս եւ քաղաքէ քաղաք , սուսէ սուս տարածուելով զարհուրելի աւերումներ կը գործեն : Կայր հետեւողութեան այնքան հակամէտ մեր երիտասարդութիւնը առթի մը կը նայի իրարու գլխու իջեցընելու այն ձեռքերը որոնք միշտ եւ ամէն ատենէ աւելի միացած պէտք է մնան :

Ինչու՞ թոյլ չէք տար որ ես սիրով մնամ իմ եղբորս , իմ բարեկամիս հետ , եւ կուգաք ձեր գրութիւններով , ձեր անձնական կոխերով թունաւոր ուղեւորներ նետել մեր մէջտեղ :

Այլ զգուած ենք , պարոններ : Կուսակցականութիւնն է մեր տունը կործանողը , եւ դուք տակաւին կը շարունակէք . . . : Հայր ո՛չ սիրտ , ոչ փափագ ունի ձեր ըստ , ըսի ինչպիսիքով զրազելու . եւ արդար իրաւամբ կը պահանջէ որ եթէ յեղափոխական էք , եթէ ուժ էք , թընամիտին դէմ կոռուիք : Ձեր պարտքը ստիկա է . իսկ միացեալին պարտագանգութիւն կըսեն :

Չենք անոնցմէ որ կուսակցութիւն մը կը քափեն անձերու վրայէն : Մարտի խմբագրապետին ըրածը եպիտոքի կը գտնանք , իր ներքին կոռւներու բաժնին մէջ , եւ ի սէր յեղափոխին խորհուրդ կուտանք որ այդ անմիտ լիաձայնքը վէճերուն վերջ առայ ու համերաշխութեան ուղիէն չը հեռանայ :

Իսկ եթէ անուղղայ մնայ , եղբայրս սիրութեան կոչ կընենք Հնչակեան վարչութիւններու ընկերներուն , եւ կը հրաւիրենք զիրենք որ չհանդուրժեն իրենց անունով եւ անուն իրենց հաւանութեան բացուած ամօթալի այդ կոռուներուն :

Անցեալի դասերը բաւական ըլլան թող մեզի , եւ լրագրի մը յօդուածը , հայեր , թող չի կարենայ մեզ իրարու դէմ հանել : Կեդրոնի մը , խմբագրութեան մը անսալէ շատ աւելի վեճ ու վտեմ է անսալ հայու սրտի ձայնին :

ԳԱՄԵՐ-ԱՐՇԱԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԱՏԱՆՁ

Հ Ա Ն Գ Ա Ն Ա Կ Ո Ւ Թ Ի Ն

—) (—

Է. ՅՈՒՅՈՒ

Table with 2 columns: Description and Amount. Includes items like 'Գուժար Զ. ցուցակի Գայաճրգէն' and 'Տեղաբ'.

Table with 2 columns: Description and Amount. Includes 'Գուժար' (31.60) and 'Համագումար' (262.40).

ԱՐՓԻԱՐ—ՀՐԱՆԳ ԽՆԴԻՐ

—) (—

Հնչակեան վերակազմուած կուսակցութեան օւկան Պարաթերթին մէջ Պ. Արփիար Արփիարեան նոր գլուխ մը բացած է , ուր յարձակումներ կընէ Պ. Հրանդի դէմ , անցեալի մշուշներուն մէջ խորասուզուած :

Պ. Հրանդի իր անձին պաշտպանութեանը համար մեղ զրկած յօդուածները հաւանած ենք հետըզհետէ հրատարակել , առիթ ընծայելու համար իրեն որ ճշմարտութիւնը երեւան բերէ , ու իր դէմ եղած զրպարտութիւնները ջրէ : Արգարութիւնը այսպէս կը պահանջէր , եւ նոյն բանը պիտի ընէինք Պ. Արփիարի ալ , եթէ արդէն իր տրամադրութեան տակ թերթ մը ունեցած չըլլար :

ՔԻՉ ՍԸ ԲԱԿԵՆԻ ԿՍԻԿ

—) (—

Արփիար էֆ. Արփիարեան , Մամբրէի հարցաքննութիւնը ըստ տեսնելէն ի վեր , միշտ ջանացած է ցոյց տալ թէ վաւերականութիւն չունի ատ . ու ըսած է իր Մարտի մէջ , թէ երբ հրատարակուեցաւ , ամենքին ծիծաղը շարժեց , որով շարունակելի միաց հարցաքննութիւնը :

Նախ , զարմանալի չէք գտնիր որ Արփիար էֆ. Արփիարեան ոգի ի բոլին կաշխատի կասկածի ենթարկելու Մամբրէի հարցաքննութիւնը , ու այդպէս ջերմեանդ ջատագովութիւն : Եզուիտին միտքը հասկնալ

պէտք է . կողմակի կոխ մըն է գալիք հարցաքննութեան մը դէմ՝ ուր չգիտեմ թէ ի՞նչ դէմքով պիտի երեւայ «Հայոց Ժիւլ Ֆարլըն ու Միրապոն» : Այս կէտը նշանակելով , դիտել կուտամ թէ , Մամբրէի հարցաքննութեանը վրայ ծիծաղող—եթէ բնաւ եղած է աշխարհի վրայ—ա՛ն ալ ինք միայն ըլլաւու է , պայմանով որ «ծիծաղող» բառը «զոզողացող , սարսուփահար» հասկցուի : Վասն զի հարցաքննութիւնը , անոր կեանքին մէջ , այնպիսի գրիթի վայրկեաններու մէջտեղ ինկաւ ուսման պէս՝ ուր Արփիար էֆ. ջուրն ինկած հաւու պէս՝ շմորած մնաց :

Ո՛չ , հարցաքննութիւնը ամբողջ է , ու եթէ շարունակելի բառը դերուած է ստորեւ , կամ մոռացութիւն եւ կամ ուրիշ հարցաքննութիւններու—կը հասկնանք Արփիար էֆին—մէկ շարքը մատնանիշ ընելու դիտաւորութեամբ եղած ըլլալու է : Մամբրէի հարցաքննութեան մասին կրնան որոշ կարծիք յայտնել իր շրջանին մարդիկը՝ որոնք իրեն գործակից , սրտակից ու խորհրդակից եղած էին , Մուրատ , իր ըսածին նայելով «հայութեան ամենէն զէմք» , Գր. Գրիլճեան , Պատրիքոֆ , Շմաւոնեան , Յ. Մ. Ն. Ս. եւ ուրիշներ . դառով իրեն , սարսուղ միայն կրնայ եզուրտին :

Բայց Արփիար էֆ. ալ բան մը գիտէ . ի՞նչ կըսեմ , թերեւս ամենէն մեծ բանը , իր շրջանին մէջ տարածեց թէ Մամբրէն ոչ թէ Ս. Ուաչ , ինչպէս որ գրուած է հարցաքննութեան մէջ , այլ Ուարթալ էր քարոզչի պաշտօնով , ուստի անվաւեր :

Առնուազն՝ 10-20 հարգող հայ կայ իւսկիւտարի մէջ որ կրնայ վկայել թէ Մամբրէն Ս. Ուաչ էր Պայագիտէ դառնալէն ետքը , Ալէքսանդրի ձախ կողմը դասին մէջ՝ վիզարն ալ գլուխը : Ու կրնանք ըսել թէ երբ յեղափոխականի անուն ունէր , ո՛չ մէկ եկեղեցիի մէջ թողակով պաշտօն ունեցաւ , ու Բաշալեան Լեւոն էֆ. շատ լաւ գիտէ որ Վոսիտի մէկ գիւղէն միւսը անցնելու համար իրմէ փոխառութիւն բրած է : Ճիշդ է , Մամբրէն Ուարթալ գնաց , քանի մը շարքով գուցէ , բայց այն ատեն երբ ալ բանը բանէն անցած էր . եւ ինքն է որ կըսէր թէ «ո՛րչափ ատեն որ ազգին մէջ զործիչի անուն ունէի , ո՛չ մէկ տեղ թողակուոր պաշտօնեայ նշանակուեցայ , իսկ երբ հոչակուեցայ իրրեւ ինկած մարդ , Ուարթալ քարոզչի նշանակուեցայ Պատրիարքի կողմէ» :

Այդ ժամանակագրական սխալն է որ այդքան մեծ երեւցած է Արփիար էֆ. Արփիարեանի սրտես աչքին : Ըսածներու անհրաժեշտ ճշգրտութեան ու եզուրտին ցանցնած անպատկառ ստութեանը վկայ կը կոչեմ ամբողջ իւսկիւտարցիին , իսկ իր Ուարթալը , մասնաւոր պատրիարքարանի արձանագրութիւնները՝ իրենց օրով ու թիւով :

Ու ըսեմ տակաւին . Մամբրէն , իր բոլոր անվաւերով , իրրեւ որոշ ու յայտնի մարդ , աւելի բարձր էր պատնէշին տակ երեսի վրայ ինկած , քան թէ ան , ա՛յն եզուրտը , որ մութին մէջ մութ , լոյսին մէջ ալ մութ մնացած է , եւ իրրեւ թէ պատնէշին վրայ՝ իր արիւնտ ձեռքը կիրկնցնէ յա՛ խաւնական սրբութիւններու :

Էլի կը սեանու ինք :

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Արեւստեղծ , 29 Ապրիլ Եզուրտի Գաւառական Երեսփոխանական Ժողովը նախաձեռնութիւն ունեցաւ Սահմանադրութիւնը քննելու՝ առաջնորդական ընտրութեան առթիւ քանակական անհանձնելի արարքին որ միաձայնութեամբ ընտրուած առաջնորդին անուան կը կցուի ուրիշ անուն մը , կասկածելով թէ մի գուցէ Դուռը եւ Պատրիարքարանը—նրկայի երկու անբաժանելիներ—չընդունին ընտրուած առաջնորդը :

Ընտրուած եկեղեցականը ազգային ամէն շրջանակէ յարուած անձնաւորութիւն մը ըլլալով , չենք կրնար հաւատալ թէ Պատրիարքարանը վարանի օրինական ձեւակերպութիւնները կատարելու , եւ Դուռն ալ մերժելու պիտարք չնորհել , քանի որ կառավարութեան կողմէ ալ յիշեալ եկեղեցականը ո՛ր եւ է կերպով չէ քննադատուած :

Արդ , մեզի տարօրինակ կը թուի Գահիրէի Ժողովին ունեցած կասկածը ընտրակալ ընտրութեան եկեղեցականին վաւերացման համար : Տեղը չէ՞ հարցնել թէ՛ եթէ մեզի անձնօթ պատճառներով կասկած մը ունէին , ինչու՞ ընտրեցին :

Ժողովէ մը որ զուտագէտներէ , վարչագէտներէ եւ օրէնսգէտներէ կը բաղկանայ , այսօրինակ սխալ մը չէր սպասուեր :

Սխալ մը ճանչնալ եւ ուղղելը արժանիք մը կենթադրէ . դէ՞ թ պիտի ուզե՞ն վաղընպիսի յայտ սխալը դարմանել , բան մը որ մինչեւ այսօր չէ եղած . այն ատեն ներքի կրլլայ մեզի իրենց արարքը գիտակցօրէն խաղացուած խաղ մը նկատուու եւ բնաբարու մը՝ Ազգ. Սահմանադրութեան ոգին , որ ազգին միակ օրէնքն ու կամքն է :

Հիտեւապէս , կը մղուինք հաւատալու թէ մասնաւոր նկատու ունեցած են Գահիրէի Ժողովականները , այն է իրենց առաջնորդներ չունենալ ունենալ ուղի ցոյց տալով , եւ կամ մասնաւոր եւ իրենց վերապահալ հաշիւով մը պաշտպանեալ մը առաջ քշել , որպիսին է Այվազեան վարդապետ—չատ ծանօթ Սիւի կաթողիկոսական վերջին ինչորի մէջ ունեցած դերովը :

Յիշու վարդապետը չը գիտցուի ի՞նչ պատճառով զիմուի՞ եր բրած է Եզուրտի իշխանութիւն ունեցող անձերու մօտ , ձեռք անցընելու համար տեղեւոյ առաջնորդութիւնը , երբ արդէն ինքը՝ Ռոտտոթոյի առաջնորդ ընտրուած , եւ պաշտօնատեղին ալ հրաւիրուած է :

Եզուրտի առաջնորդական տեղապահ հայրը եւ Արեւստեղծի Պատրիարք իրորեւրդը ազգու կերպով բողոքած են այն հակասահմանադրական արարքին դէմ , մէկիկ մէկիկ թուելով այն անպատկառութիւնները որք կրնան ծնունդ առնել իրենց նստեւած ընթացքէն . գալով Ժողովրդեան վերին աստիճանի զգու՛ Սահմանադրութեան բնաբարու մէջ , անհամբեր կապառէ խնդրին ելքին :

Կը յուսանք որ Գաւառական Ժողովը այս անգամ կու նենայ պէտքեղած խոհեմութիւնը եւ շրջանայցութիւնը , ուղղելով իր սխալը , տեղի չի տալու համար խլրտու միտքը եւ միջազնայնութիւն :

Ս. ՍՈՒԻՆ

ԳԻՆՆԵՐՈՒԱՆ ԽԱՆՈՒՄԻՆ ՄԷՋ

—)(—

Գիշերուան խաւարին մէջ, որ աւելի կը թանձրանայ խիտ ու սեւ ամպերով երկինքին, գիշերուան խաւարին մէջ կ'աթկըթող անձրեւին պէս, արցունքի շիթերը կը փթփրթան բարձիս վրայ, ու մէկը չունիմ որ սրբէ ատոնք:

Վէրքս կարելնի գիշերուան խաւարին մէջ, եւ արեւը կը հոսի յորդաստ, միաքս կը տանջուի, շա՛տ կը փնտռում մէկը՝ որ արեւնս լուայ ու սպեզանի զնէ վէրքիս վերայ:

Թշուառ հայրենիքիս կարօտով, եւ յիշատակով թշուառ ծնողքիս, գիշերուան խաւարին մէջ կ'ողորմում միայնակ, ու կարօտը քոյրերուս, եղբայրներուս, որ ուսելիք չունին, խմելիք չունին, պատկերիք սեղ ալ չունին, կարօտը՝ հոգիս կը տանջէ: Մահն ըստ՝ ինքնակոչ հիւրի մը պէս, աներես հիւրի մը պէս գրէթէ ամէն շարժի հոն է. այս մտածումներուս մէջ մէկը չունիմ որ վայրիկ մը սփոփէ զիս գիշերուան խաւարին մէջ:

Ըրեկն ալ մտթ է սակայն սենեակս, արեւին մոնելէն ետքը չէ որ կը մնամ գիշերուան խաւարին մէջ, ու մէկը չունիմ որ նայուածքով լուսաւորէ խաւար սենեակիս:

Սենեակս ցուրտ ալ է, մանաւանդ գիշերուան խաւարին մէջ. գողգող էակ մըն եմ ես, շուարած, անտէրունջ, մինակ. մէկը չունիմ որ չունջովը տաքցնէ խցիկս ցուրտ:

Արին արցունք կը վազեն մարմինիս ամէն կողմերէն, միկն ու ցուրտ է միջնորոտը իմ պղտիկ աշխարհքիս, ուրեմն դեռ կ'աղբիւմ, վասն զի կեանքը ինքնին խաւարն է, գիշերուան մը չափ միայն երկար, ու խաւար՝ գիշերուան մը պէս:

Օհ, անելի՛ է տխուր քունը գիշերուան խաւարին մէջ:

ԽՈՍՐՈՎ

—)(—

ԴԵՍ ՈՒ ԴԵՆ

Պատրիարքանի կարգադրութեամբ Այնթապի եւ շրջակայ գաւառակներուն համար 30 հոգի նոց սրբանոց պիտի բացուի:

Այս նոր որոշանոցին ծախքը պիտի հոգացուի Մանչէսթըրի բարեկէր ազգայիններու կողմէն:

Նմանապէս Բալթիփորնիոյ ֆրէզնոյ քաղաքին լուսաորչական եւ բողոքական հայերը որոշեցին տարուէ տարի գոնէ 360 տոլար զրկել պատրիարքարան որբախնամ գործին համար: Նրպատէն աւելի, այս գործին մէջ մեղի ուրախացնող պարագան, Բալթիփորնիոյ հայերուն առանց կրօնի խտրութեան եղբայրութեան ձեռնարկի մը գործակցելն է:

Պարսից Եահը համակրանքի նոր ցոյց մը ըրեր է իր անձնական բժիշկ Տօքթ. Յ. Թրեւաքեանի Առիւծ-Արեգական Բ. ատաւիճանը շնորհելով «բարբոտ» մէկուսի: Գիտնական եւ գրագէտ բժիշկը, որ այնքան ատեն հաւատուցուած թրքաց կողմէն եւ բանտերու մէջ հեծեց, այժմ արժանաւորակ է եւ գրկաբաց ընդունելութիւն մը գտած է Պարսից արքունիքին մէջ:

Վանէն «Մշակ»ի գրուած նամակ մը կըսէ թէ ազբատութիւնը տարապայման է եւ ճարակած է ամբողջ նահանգին մէջ: Սմերիկացի միսիոնար Ալէն վերջերքը դարձեալ մեծ քանակութեամբ ցորեն բաժնէր է կարօտեալներուն: Հետաքրքրական էր գիտնալ թէ այս ցորենին քանի՞ հատիկները արտասահմանի հա-

յոց զոհողութեամբ գոյացած են: Առանց հայու ներկայութեան Թուրքիան ոչինչ է ըսուած է. եւ շատ ալ իրաւացի է: Եղեւ լուծիւնները ինքնին թող խօսին: Այժմ Թարսերդի թիւրք եւ քիւրա պէյերը եւ հողատէրները խիստ բողոքազրով մը կ'առաւարտութեան դիմած են որով կը բացարեն ջարդերուն պատճառած ահագին վնասը եւ կը յաւելուն թէ առանց հայերու իրենք չեն կրնար ապրիլ, թէ երկիրը անմշակ ու սևերակ մնացած է եւ թէ վերջապէս սովամահ պիտի ըլլան եթէ զաղթականութեան առաջը չառնուի:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ

Ք. Ա. Դ. Ի. Ե. Ի. Ն. Ի. Կ. Ա. Մ. Ս. Ք.

Սմերիկացիք, գիշերուան մութին օգնութեամբ, Մանիլայի ծովածոցէն ներս մտան: Կեղեւի թէ սպանիացի ծովագետը ո՛չ իսկ ծոցին բերանը կըցեր է թորփիլներով սպաշտպանել: Սմերիկացիք միջնոյն ատեն ուժբակոծեցին թէ՛ սպանիական մարտանաւերը եւ թէ՛ Բալթիքէի ամբողջները: Սմերիկեան մարտանաւերը համարձակ կը շարժէին չորս կողմ, ամենէն նպատաւոր կէտերէն կրակ ընելով, մինչ սպանիացի ծովագետին գործունէութիւնը սահմանափակ էր: Կեղեւը առտուն կանուխ սկսաւ:

Սմերիկեան ուսմբեր թէ՛ թուով աւելի էին արագահարուած թրեղանօթ աւելի ունենալուն համար եւ թէ աւելի խոշոր: Սմերիկեան նաւերու կողերը եւ մանաւանդ տախտակաման աւելի աղէկ պատուարուած էին: Սպանիացիները ժամ մը քաջապէս կռուեցան, բայց երբ սմերիկացի ծովագետն հրաման տուաւ հըրկիզման գունտերն արձակելու, չփոթութիւն ինկաւ սպանիացիներուն մէջ, զի հին սճով մար-

տանաւերուն վերնայարկն այնքան լաւ պատուարուած չէ: Այս կէտին ամենէն աւելի նոր մարտանաւերու մէջ հոգ տարուած է, այնպէս որ վերէն տեղացող ուսմբերն ու հրձիգ գունտերը միջոց չունին նաւուն տախտակամանէն ներս թափանցելու: Եւ ահա՛ հրդեհը ծայր տուաւ «Բէյնա Գրիտիկան» (Գրիտիկէ թագուհի) մարտանաւին մէջ, ապա «Բասգիլլա» յաճաւորակին մէջ: Բոլոր նաւարաժներն է՛ն կարող նաւապետն էր «Բէյնա Գրիտիկան» հրամանատարը, Բատարոս նաւապետ, որ մնաւ: Նաւազներն իրենց կեանքն ազատեցին որքան կըցան, եւ երկու մարտանաւերը ծովուն տակ գացին: Բայց ամերիկացիները «Մէյն»ի վրէժն ա՛յն առեն լուծեցին երբ հուրրաներով ողջունեցին «Տօն Ճուան տ'Ասագրիա» յաճաւորակին վառօդարանին պայթիլը ամերիկացիներուն արձակած գունտերէն, որք նաւուն վերնայարկը ճեղքելով, կրակ ձգեցին վառօդի եւ ուսմբի շահմարանին մէջ: Պէտք է երեւակայել սոսկալի շառաչիւնը, ժխտրն եւ գոռում գոչիւնն որով օդն ելաւ «Տօն Ճուան», եւ կտոր կտոր եղաւ, ահ ու սարսափ ձգելով սպանիական դժբախտ տորմիլին մէջ:

Այս կացութեան առջեւ, ծովագետ Մոնդօսօ, Բասագիլլեան վեհարտութեամբ մի բժիշկով անձնատուութեան գաղափարը, իր մնացեալ նաւերն աւելի ներքին ծովախորշ մը խոթեց, եւ հրաման տուաւ որ ամերիկացիներուն աւելի մօտ գտնուող սպանիական մարտանաւերն ընկղմեն: Նաւազները մեկնեցան որչափ կըրցան, իրենց ձեռք պայթեցնելով, կամ տակէն խոշոր ծակեր բացած՝ ընկղմելով իրենց նաւերը:

ՌՈՒՍԻԱ ԱՐԵՒԵԼԻՒՄ ՄԷՋ (1)

Պատմութեան մէջ կան տգեղ իրողութիւններ, որոնց դժոխսիւն բոցը պայծառապէս կը լուսաւորէ գիւտնազրտական ամենէն գաղտնի եւ ծածուկէն էնթրիքներն ու մեքենայութիւնները: Հայկական սարսափելի ջարդերը կը մտնեն ճիշդ այդ դասակարգի իրողութիւններու մէջ: Մենք ալ ունինք մեր պատմութեան մէջ նոյնօրինակ բան մը. ես կըսեմ՝ միայն «նոյնօրինակ բան», որովհետեւ Պուլկարական սարսափները «կը նոսմանան» հայկականներուն քով: Բայց Պատմութիւնը եւ ուրիշ ջարդերէ ալ դուրս մարդկութիւնը մտնելու քերէ սարսափ ընդհանուր կոչ մը ելաւ: Միայն Անգլիոյ մէջ, ուր թիւրք իր ճիշդէքի հաշիւներուն համաձայն, մօտ 450 ազգային միթիւններ եղած են ի նպատակ պուլկարներու: Ասիկա մտնաւանդ քակեց Ռուսիոյ ձեռքերը՝ որ պատերազմ բանայ, վասն զի առանց եւրոպական ընդհանուր համակրանքի Ռուսիա

նոր նիւզակակցութեան մը պիտի հանդիպէր: Բայց ինչ որ եւրոպա Ռուսիոյ արտօնեց, այս վերջինը չուզեր արտօնել եւրոպայի: Եւ ի՞նչ պարագաներու մէջ: Հարիւր հազարէ աւելի հայեր զետեղեցին իրենց ու որներն ընդարձակ գերեւմանոցի մը—Տաճկաստանի մէջ: Միայն Տիգրան ակերտի նահանգին մէջ 30 (՝) հայ մորթուած եւ 119 գիւղ այրուած են, ինչպէս կը հաշուէ ֆրանսական հիւպատոս Մէյրէն: Այլեւս ազատութիւնը բան չէր մնար Հայաստանի մէջ, «որովհետեւ—կըսէ Լեւիլամ՝ Ռուսըն բանուտեղծը—ի մօտոյ վերջին խորանը պիտի պղծուի, վերջին կոյսերը պիտի զրկուին իրենց կուսական ծաղիկէն եւ անթութեան մահամեծ վերջին մայրը պիտի գրկէ իր չորցած թեւերով պաղած կուրծքին վրայ իր վերջին մորթուած տղակը»: Եւ երբ Ֆրանսական գեոպանը, Մօնթէպէլլօ, Մուշի ջարդերուն տակալի ման-

(՝) Կերեւի թէ տղազրական սխալ մըն է այս. 30 գրուած է փոխանակ 3 հազարի:

րամանութիւնները տեղեկացուցած է իշխան Լօպանօֆի, Քրիտտոնեայ եւ ուղղափառ Ռուսիոյ արտաքին գործերու նախարար պատասխանած է ֆրանսական գեոպանին, թէ բոլոր ատենք մի ազգէպէր են, որոնց ճշմարտութեան պէտք չէ լիապէս հաւատալ:

Մենք անցած գլխին մէջ տեսանք թէ ուս մամուլը ինչպէս սիրով կը վերաբերուէր դէպի Տաճկաստան, բայց այդ ամէնը միայն մէկ տկար արձագանգն էր այն պաշտպանութեան զոր ուսական գիւտնազրտութիւնը կը նէր թուրքիոյ: Եթէ «նոյն Վրէմիա»ի պէս թերթ մը կը յայտնէ թէ «Ռուսիոյ համար Արեւելքի մէջ չկայ ուրիշ ազգային քաղաքականութիւն, բայց թէ իրաց այժմեան վիճակը պահել մինչեւ որ շահերուն աւելի համապատասխան միտքները թիւն մը գտնուի» անոր համար է որ ուսական գիւտնազրտութիւնն ալ միեւնոյն կարծիքը ունէր: Պիտի բացատրենք համառօտակի այն գիւտնազրտական թղթերը որոնք լիապէս կը հաս-

տատեն Ռուսիոյ այժմեան թըրքասէր քաղաքականութիւնը:

Սասունի համալուար ջարդերուն հետեւեալ օրը, Անգլիոյ Լորտ Ռօզպէրի ազատական դահլիճը կ'առաջարկէ որ Փոքր-Ասիոյ մէջ թրքական վայրագութիւնները քննելու համար անգլիական, ուսական եւ ֆրանսական պատուիրակներով եւրոպական յանձնաժողով մը զրկուի: Լօպանօֆ իշխան կը համակերպի զրէլ պատուիրակ մը, որ միւս երկու պատուիրակներուն «ընկերանայ» միայն: Միեւնոյն մանակ անգլիական կ'առաւարտութիւնը ծրագիր մը կը յօրինէ Հայաստանի բարենորոգումներու համար: Սակայն այս ծրագիր շատ լայն է եղեր, որովհետեւ անոր մէջ Հայաստանի համար որոշ ինքնօրինութիւն կը տեսնուի եղեր: Այս ինքնօրինութիւն կը տարածուի եղեր գրէթէ ամբողջ Փոքր Ասիա:

Տօքթ. Բախովսի

(Տարուեսակցի)

ՎԱՐԳ-ՊԱՏՐԻԿՈՎԻ ՅԻՇՏԱՍԿԱՐԱՆԻՆ  
հրատարակութեան շարունակու-  
թիւնը նիւթերու առատութեան  
պատճառով առ այժմ ստիպուած  
ենք յետաձգել :

### ԲՕԼԻԹԻԳԱ

#### ԱՄԷՐԻԿԱ ՎԷ ՍՊԱՆԻԱ

Ֆիլիբերին ասալարընսա Սպա-  
նիա տօնանմասընըն քեամիլէն  
թախրիպիւնտէն սօնրա , պու գա-  
տար զարիլէ քեաֆի տէկիլ կիպի,  
շիմտիտէ նէֆսի Սպանիա տէ-  
րունիտէ պէօյիւք զարըըըըը  
վէ արպէտա զուհուր իթմիշ տիր-  
չէօյլէ քի , մաղլուպիյէթ հազա-  
տիսի Մատրիտտէ վէ տիկէր շէ-  
հրիլէրտէ իշիտիտիկի անտէ է-  
հալի վէ հիւքիւմէթէ գարշը  
թարաֆտարլար , սէբիւրիւքէն  
վէ քարլիսգ ֆըրգալարը , պու  
տէհչէթիլի մաղլուպիէթիւն սէրու-  
սէպէպիւնի հիւքիւմէթի առա ի-  
տուպ անա գարշը շիտտէթիլի  
նիւմայիշլէրէ պաշլարլար :

Մէպուսան մէճիլիստէ ըն-  
բիւպիլիքէն Մ. Սալմէրոն քէսկիւն  
պիր լիսանլէ հիւքիւմէթի վէ  
գրալըըը թայիպ ու թազպիհ  
իտուպ ճիւմհուրիյէթ սիսթէ-  
միւնի մէտհ ու սէնա իթմիշ տիր-  
վիւքէլա ըէիսի Մ. Սակադա  
ճէվապէն տէմիշ տիր քի հէր  
պիր սպանիալընըն վազիֆէի վա-  
թանքըվէրանէսի պու թէհիւ-  
քէլի տազիգէտէ եէքվիճուա վէ  
հէմէֆքեար օլուպ վաթանը միւ-  
տաֆաա իթմէքտէն պաշգա պիր  
չէյ տէկիլ տիր :

Սպանիանըն պաշգա թարաֆ-  
լարընտա տէյիլ եալընը մաղ-  
լուպիյէթ սէպէպիւնտէն , իլլէ  
պուղտայ ֆիյաթընըն եիւքսէլ-  
տիկիւնտէն տօլայը էհալի վաշ-  
շիանէ նիւմայիշլարտա պուլուն-  
մազտա տըր :

Բօլիս վէ ժանտարմա պէօյիւք  
զահմէթլէր իլլէ պու գարըըըը-  
լըզլարըն էօնիւնի ալապիլիյօր-  
լար :

Մատրիտտէ վէ Սպանիանըն  
տիկէր պիր գաշ շէհրիլէրիտէ  
իտարէի էօրֆիյէ (պաշարման  
վիճակ) իլան օլընմը տըր :

Ամէրիգա մէնպալարընտան կէ-  
լէն հազաաիւլէր Մանիլանըն  
թէսիլմիւնի վէ Ամէրիգա պան-  
տէրասը Ֆիլիբերին ասալարը իւ-  
զէրիւնտէ չէքիլմիշ օլտուղընը  
սէօյլէյօրլար իսէտէ պու պապտէ  
սօն վէ գաթի պիր շէյ եօգ տըր :

—Եէշիլ պուրուտան եօլա  
չըզմըլ օլան Սպանիա տօնանմա-  
սը Գատիցէ չաղըլմը տըր . օ-  
րատա պուլունան ֆլօթա իլլէ պիր-  
լէշէրէք Ամէրիգա սուլարընս  
կիտէճէկիւնտէն : իքիւնի պիր  
միւսատէմէ իքի հաֆթատան ան-  
ճագ վուզու պուլապիլէճէք տիր :

—Քապիլմէ մուհարէպէսիւնտէ  
ամէրիգալըլարտան 50 քիշի էօլ-

միւշ վէ 100 քիշի եարալանմըլ  
տըր :

—Քիւնէսդտէն վէրիլէն հա-  
պէրէ կէօրէ Գուպա աւըլարըն  
սէրկէրտէսի Մաքսիմօ Կօմէղ Մա-  
թանգասա տօղրու եօլա չըզմըլ  
տըր վէ տէօրթ կիւնտէն օրայա  
եէթիշէճէք իմիշ : Ամիրալ Սամը-  
սընըն մէղքիւր մահալըն թապ-  
եալարընը հէտի իլլէ զապթ իտէ-  
ճէկիւնի սահիհ տիր : Ամէրիգա  
օրտուսը Մաթանգասա առայա  
չըզաճագ ըմըլ :

—Քուպա օրտուսընըն գօման-  
տանը ժէնէրալ Պլանքօ ապրիլ  
22տէ առանըն մէճիլսը մէպու-  
սանընը էճնէպի գօնսօլայար վէ  
ֆրանսըլ վէ ինկիլիզ վարօրլա-  
րըն զապիլմանը հուղուրընսա  
ըէտէն աշուպ գրալիճանըն պիր  
իլաննամէսիւնի օղումըլ վէ իւա-  
վէթէն «Սպանիանըն հիւքիւմ-  
րանիէթիւնի միւտաֆաա վէ մա-  
հաֆաղա վէ գրալա գալիէն ի-  
թաաթ իթմէյի էմիւն իտէ՞րմի-  
սիւնիլ» սօրտուղընտա՝ մէճիլս  
աղալարը «իտէրիլ» ճէվապընը  
վէրիլէր :

—Մատրիտտէ առէթի վէճհ  
իւզրէ մուհարէպէ հազաաիւլէ-  
րիւնի հէր ազշամ ըէտմի սուրէթ-  
տէ էհալիյէ պիրտիլմէքտէն հիւ-  
քիւմէթ վաղ կէշիլ տիր :

—Սպանիա տօնանմասընըն նէ-  
րէլէրտէ պուլունտըլընը անլա-  
մագ իշիւն պիր գաշ ամէրիգա  
քրուազէօրլէրի Աթլանթիք տէ-  
նիզիւնի ալթիւսթ իթմէքտէ տիր-  
լէր : Անը կէօրտիւքլէրի կիպի  
էն եաղըն թէլէկրաֆ սթասիօնը-  
նա գօշուպ Ուաշինկթընս խապէր  
վէրէճէքլէր քի ամիրալ Սամը-  
սըն տէրհալ Բօրթօ-Րիքօտաքի  
վէ Քիւնէսդտէքի իքի ամէրիգա  
տօնանմալարը պիրլէշէրէք Սպա-  
նիա տօնանմասընը գարշըլարըն-  
լար վէ անը թախրիպ իթաիք-  
տէն սօնրա Գուպայը սէրպէսթճէ  
մուհաաէրէյէ թուլտուլար :

—Չալալը Սպանիա տօնան-  
մասը Եէշիլ Պուրուտան չըզըպ  
Քանարի առալարընս տօղրու  
կիթտիկիւնտէ , եօլտա զայէթ ա-  
ղըր եիւրիւմէքտէ իմիշ քի քէօ-  
միւր պօշ կէրիւնէ թիւքէնմէ-  
սիւն :

### ՍՕՆ ՉԱՎԱՏԻՍԱԹ

—)(—

Ապրիլ 25 թարիլիլէ կէլէն հա-  
զաաիւլէր եէնի պիր մուհարէ-  
պէնիւն վուզուիւնի հապէր վէրի-  
յօրլար իսէ տէ , մուայիէն պիր  
չէյ եօգ տըր :

Մատրիտտէն մէղքիւր թա-  
րիլիլէ չէքիլէն պիր թէլէկրաֆա  
կէօրէ Սպանիա վէ Ամէրիգա տօ-  
նանմալարը պէյնիւնտէ կէօյա  
Աթլանթիք տէնիզիւնտէ պիր միւ-  
սատէմէ վուզու պուլունը վէ  
Սպանիալըլար զալէպէ իթմիշլէր  
տիր (՞) :

—Քուպա առաւընա 40,000

ասքէր նագլը իշիւն թէքմիլ վա-  
րօրլարըն հաղըրլանմասը Ամէ-  
րիգա հիւքիւմէթի թարաֆըն-  
տան էմր վէրիլմիշ տիր : Պուն-  
լար 5 կիւնտէն Քիւնէսդտէ եէ-  
թիշէճէքլէր տիր :

—Ամիրալ Տիուէյ Ուաշինկ-  
թընա պիր թէլէկրաֆ քէշիտէ  
իտիպ Քապիլմէթ թապեալարընը  
զապթ իթմիշ իսէտէ՝ սսքէր  
նօգտանը սէպէպիւնտէն Մանիլա  
չէհրիւնի իսթիլա իտէմէմիշ օլ-  
տըղընը խապէր վէրմիշ տիր :

—Թամբատան «Ուօրլու» զա-  
վէթաւընա եաղըլարընա կէօրէ  
Ամէրիգալը պիւն պաշը Սմիթ՝  
ապրիլ 10տա Գուպանըն ճէնուպ  
թարաֆընտա՝ պիր գաշ զապէ-  
թա մուլապիլիլէրիւնէ պիրլէշէք  
իշիւն Գուպայա չըզտըլընտա  
Սպանիալըլար թարաֆընտան  
թուլտուլունը վէ գաֆաա քէսիլ-  
միշ տիր . մուլապիլիլէրտէն հա-  
պէր եօգ տըր :

—Ուօրլու՞նըն Հոնկ-Քոնկտան  
ալաղը պիր հազաաիւլէ նագա-  
րէն Մանիլատան եէթիշէն «Մա-  
քօլլօ» ալիզօ վարօրը Սպանիա  
տօնանմասընըն քիւլիէն մահվ  
օլտուղը խապէրի կէթիլմիշ տիր :

—Աւստրիատան մատա տիկէր  
էվրոքա տէվլէթլէրի Ամէրիգա-  
Սպանիա մուհարէպէսիւնէ ալա  
գարըլմայաճագլարը պէյան իթ-  
միշլէր տիր :

—Սպանիա գրալիճասը՝ տօ-  
նանմանըն մաղլուպիէթիւնի ի-  
շիթտիկիւնտէ Հոռմա բարասընս  
պու պապտէ պիր թէլէկրաֆ  
չէքմիշ վէ Սպանիա օրտուսը ի-  
շիւն տուվա իթմէսիւնի ըէճա իթ-  
միշ տիր :

Էկէր Սպանիանըն զալէպէսի  
բարանըն տուվաւընտան իլլէրի  
կէլէճէքտէ , Ալլան քէնտիսիւնէ  
եարտըմ էյլէյէ :

### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Տնօրէն Խորհուրդս կը փութայ  
ծանուցանել որ մայիս 3ին , կիրա-  
կի կէս օրէն վերջ , ժամը 2ին , Պր-  
Ս. Սապահ-Գիւլեան պիտի գասա-  
խօսէ ընթերցարանիս մէջ , հետեւ-  
եալ ծրագրով :

Տնօրէն Խորհուրդ  
Երիտ. Ընթերցարանիս Ընկ.  
Ռուսճուգ , 25 Ապրիլ  
Ծ Ր Ա Գ Ի Ր

Տնտեսական գիտութեանց առար-  
կան . — աստիճանաբար զարգացու-  
մը , յարաբերութիւնը ուրիշ գիտու-  
թեանց հետ :

Տնտեսագիտական գաղափարներ :  
Ա. Ազատական գաղափար , իւր վար-  
դապետութիւնները . — Մարդկային  
ընկերութիւնները եւ բնական օ-  
րէնքները . — Անհատական շահերը  
եւ ընկերային ներդաշնակութիւնը . —  
Օրէնսդրի պարտականութիւնը եւ  
գիրը . — Եկեղեցին եւ ազատան  
գաղափարը . — Կենսագիտութիւնը :

Բ. Պատմական գաղափար , իւր քա-  
րոզած սկզբունքները . — Պետական  
անձանց վերաբերութիւնը զէպի այդ  
գաղափարը :

Գ. Ընկերավարական գաղափար . — Քարլ  
Մարքս եւ Ֆ. Լասսալ . — Քաղաքա-  
կրթութեան հոսանքը . — Հայկա-  
կան խնդիր եւ ընկերավարականու-  
թիւն . — Վերջաբան :

ՃԱՇԱՐԱՆ ԵՒ ՉԲՕՍԱՐԱՆ  
ՀԱՃԻ ԲԱՆԱՔՕՐԻՆ ՃԻՇԴ ԴԵՄԸ  
Կը բանեցունէ Պ. Տիգրան Թիւֆեկ-  
ւեան եւ ընկիտ

Արհեստին մէջ կատարելութեան հա-  
սած երիտասարդ հայու մը ձեռամբ  
սարքուած այս հովասուն , մաքուր  
ու գեղջական հաստատութիւն ոչ մի-  
այն պատիւ կը բերէ հայ ճաշակին ,  
այլ եւ մեծ խթան մը կը լայն որ հայ  
ու օտար փափկակեաներ իրենց դար-  
նանային ու ամառնային ժամադրա-  
վայր մը ընեն զայն զբօսնելու եւ  
ճաշելու , Պոնտոսեան ախրօթաբեր  
հովիտուն ու Սեւ ծովի կապրյոտ տա-  
րածութեան առջեւ :

Հակառակ այս հրապարակէ տուե-  
լութիւններուն , յաճախորդները պի-  
տի գտնեն յոյժ դիւրամատչելի գի-  
ւեր թէ ըմպիլիքի թէ կերակուրնե-  
րու մասին :

### ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐ

ՏՐ. Թ. ԽՐ. ՍԹՕՅԱՆՈՎ Ե ՎԱ-  
ՏԻՄԻՐ ՏԻՄԻԹՐՈՎ , որոնք իրենց  
իրաւաբանական ուսմունքը Զլի-  
ցերիոյ մէջ աւարտած են , հաս-  
տատուած են Վառնա ընկերաբար  
գործելու եւ կը ստանանքն պուլ-  
կարական ամէն կարգի գատա-  
րանաց առջեւ ամէն տեսակի գա-  
տերու պաշտպանութիւնը :

Խորհուրդ եւ բանակցութիւն  
ֆրանսերէն , գերմաներէն , ի-  
տալերէն , ռումաներէն , ռուսե-  
րէն , յունարէն , թուրքերէն եւ  
պուլկարերէն լեզուներով :

Վկայուած աղքատներուն գա-  
տերը ճրի կը պաշտպանուին :  
Գրասենեակ՝ քաղաքային գա-  
տարանի դէմ . իսկ բնակարան  
Գ. Թաղ , թիւ 151 :

### ՊՕՐՍԱ

Վառնա 29 Ապրիլ  
ՊՈՒՂՏԱՅ  
Վակօն , լիպրա 47—51 , հէքթօլ .  
13—13.50 ֆրանք  
Արապա , լիպրա 47—55 հէքթօլ .  
13—14.60 ֆրանք

ԱՐԲԱ  
Լիպրա 38—40 հէքթօլ 6.20—6.40  
ֆրանք

ՄԸՍԸՐ  
Վակօն , լիպրա 57—58 հէքթօլ .  
7—7.50 ֆրանք  
Արապա , լիպրա 57—60 հէքթօլ .  
8—8.20 ֆրանք

ՅԱՍՈՒԼԵԱ  
100 օգգասը 15—20 ֆրանք՝ մալա  
կէօրէ

Առապա մուսմէլէսի՝ Նաբօլէն 21  
ֆրանք հիսապը իլլէ տիր .  
Կիւնտէ 15—20 վակօն վէ 15—20 ա-  
րապա պուղտայ , 10—15 արապա ար-  
բա , կէլմէքտէ տիր :

Չախիլէ իրաւճընըն մէննի հա-  
վտախի սէպէպիւնտէն բիտապ կէվշէթ  
տիր :

ՏՊԱՐԱՆ «ՇԱՐԺՈՒՄ»-Ի  
Կը տպագրուին ամէն լեզուէ  
այցեատման , հասցեատման , նամա-  
կագլուխ , հարանեկան հրաւի-  
րագիր , մահազգ , ինչպէս նաեւ  
պրօշիւններ :

Գիւնըն յոյժ դիւրամատչելի՝  
Ուրիշ քաղաքներէ եկած  
յանձնարարութիւններ ճշգու-  
թեամբ եւ փութով կը կատար-  
ուին :

Печатница «Взаимность» Варна.